

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 26

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

15.10.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - գլխավոր քարտուղար
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի տեղակալ
- Ա.Բեջանյանը, Ս.Լամբարյանը, Ա.Մատինյանը, Ա.Ջանազանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Մ.Կիրակոսյանը - մարզպետի օգնական
- Գ.Սաղաթեյանը -մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Լոռու մարզպետի ուղերձը աշխատակազմին
/Ա.Ղուկասյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Զեկ. Ն.Սարգսյան/
3. Պետական գերատեսչությունների կողմից տրված հանձնարարականների մասին
/Զեկ. Ա.Խաչատրյան, Ս.Սարուխանյան/
4. Լոռու մարզի մասնակցությունը ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովին նվիրված միջոցառումներին
/Զեկ. Լ.Ասլանյան/
5. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Զեկ. Ա.Բեջանյան/
6. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
/Զեկ. Գ.Հակոբյան/
7. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ն.Սարգսյանին՝

Քննարկել և ներկայացնել առաջարկություններ մարզպետի մոտ կայանալիք խորհրդակցությունների օրակարգի ձևավորման և խորհրդակցությունների անցկացման վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Լոռու մարզպետարան դիմաձ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին հնարավորինս պատշաճ և օրենսդրության պահանջներին համապատասխան պարզաբանումներ տալու ուղղությամբ և առաջադրել հնարավոր լուծումներ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ա.Մատինյանին, աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել կրթության և առողջապահության ոլորտներում կոռուպցիայի հնարավոր դեպքերը բացառելու ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

1-շաբաթյա ժամկետում ուսումնասիրել և հրավիրել մարզի սեփական եկամուտների հավաքագրման ցածր մակարդակ ունեցող համայնքների ղեկավարներին՝ նպատակ ունենալով վերհանել հավաքագրման ցածր մակարդակի պատճառները և անհրաժեշտ լուծումներ առաջարկել

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ